

ԵՐԿՈՒ ՃՇԴՐՏՈՒՄ ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՎԱՑՈՒ
«ԱՂՎԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԲՆԱԳՐՈՒՄ

Շ. Վ. ՍՄՐԱՏՅԱՆ

Մովսես Կաղանկատվացին այն միջնադարյան հայ մատենագիրներից է, որոնց երկերի նշանակությունը վաղուց ի վեր դուրս է եկել Հայաստանի պատմության սահմաններից: «Աղվանից աշխարհի պատմության» մեջ հիմնականում շարադրված են Աղվանքի կամ Արևելից կողմանց պատմության կարևորագույն դրվագները: Բայց նրա հեղինակը մի շարք արժեքավոր և հավաստի տեղեկություններ է հաղորդում նաև կովկասյան մյուս ժողովուրդների և հարևան մեծ պետությունների՝ Պարսից թագավորության, Բյուզանդական կայսրության, Արաբական խալիֆայթի մասին: Այսպես, երբեմն բավական մանրամասն նա պատմում է VII դարի պարսկա-բյուզանդական պատերազմների առանձին դրվագները, տալիս է պարսից Սասանյան հարստության անկման պատմությունը, խոսում է արաբների պատմական ասպարեզ իջնելու հանգամանքների, հյուսիսային ցեղերի՝ Անդրկովկաս կատարած արշավանքների մասին և այլն:

Այսպիսով, թե՛ իր ընդգրկումով, և թե՛ իր նշանակությամբ «Աղվանից աշխարհի պատմությունը» շատ կարևոր սկզբնաղբյուր է կովկասյան ժողովուրդների և հարևան մեծ պետությունների պատմությունն ուսումնասիրողների համար: Եվ զարմանալի չէ, որ վերջին ժամանակներս թե՛ կովկասագետները, թե՛ ընդհանրապես արևելագետները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում դեպի Մովսես Կաղանկատվացու երկը¹, որ գիտական ուսումնասիրությունների մեջ ավելի ու ավելի հաճախ կարելի է հանդիպել «Աղվանից աշխարհի պատմության» հիշատակությանը որպես սկզբնաղբյուր: Հասկանալի է, ուրեմն, թե որքան կարևոր է գիտական շրջանառության մեջ ունենալ այդ երկի ստուգված և ճշգրտված բնագիրը: Մինչդեռ, ինչպես հայտնի է, նրա հնագույն օրինակը 1239 թ. գրչագիր է: Բազմիցս արտագրվելով՝ այն, բնականաբար, չէր կարող մնալ անաղարտ: Խաթարվել է բնագիրը, երբեմն աղճատվել կամ մթազնվել է այս կամ այն նախադասության իմաստը: Հայ բանասիրության մեջ «Աղվանից աշխարհի պատմության» առաջին հրատարակիչները Մ. էմինը և Կ. Շահնազարյանը, իհարկե, աշխատել են հնարավորության սահմաններում սրբագրել բնագիրը², բայց նրանց կատարած աշխատանքը այսօր

¹ Մեզ հայտնի է, որ «Աղվանից աշխարհի պատմությունը» Թբիլիսիում թարգմանված է վրացերեն և արդեն հանձնված է տպագրության (Л. С. Давланидзе, История Албании и Албанская хроника как источники по истории народов Закавказья. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук, Тбилиси, 1970), հատվածաբար հունգարերեն է թարգմանում հունգարացի արևելագետ Շյուցր:

² Այսպես, Մ. էմինը իր հրատարակության սկզբում գետնադրած «Աղղը» սկսում է հետևյալ նախադասությամբ. «Յերկուց անթուական օրինակաց արարաք յառաջիկա տպագիրս՝ մեծազգուշութեամբ բաղդատեալ և մաքրեալ զայնս ի գրչացն վրիպակաց» («Մովսեսի Կաղանկա-

հեռու է բավարար լինելուց, և Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության» բնագրում դեռևս շատ բան կարոտ է ճշգրտման³։ Մասնավորապես լուսաբանության կարոտ են առանձին հատվածներ Բ գրքի 47 և 48 գլուխներում, որոնց մեջ շարադրված է VII դարի սկզբին եկեղեցական ինը դասերի շուրջը հայերի և հույների միջև ծագած վիճաբանությունների և նրանց հետևանքների պատմությունը։ Այդ աղճատված հատվածները բանասերներին առիթ են տվել զանազան թյուր և անհիմն եզրակացությունների հանգելու։ Մեր սույն աշխատանքը մի փորձ է սրբագրելու բնագրի այդ մասերը։

Ա) «... ի ժամանակս Աբրահամու Հայոց կաթողիկոսի բաժանեցան Վիրք ի Հայոց միաբանությունէ ի ձեռն Կիրոնի, այլ և Յոյնք և Իտալիա ընդ նոսա։ Իսկ Աղուանք ոչ քակտեցան յուղղափառութենէ և ի միաբանութենէ Հայոց, որոց շրջաբերական թղթով վասն Կիրոնի դիմադարձութեանն Աբրահամ և յաղագս ամենեկին ի բաց կտրելոյն զնա սրով Հոգւոյն, աղղել նախ յԱղուանս, տայ գիտութիւն և գրէ այսպէս ի թղթին, եթէ «յառաջագոյն քան զՀայոց աքոռակալութիւնն կացեալ աքոռակալութեանն Աղուանից, և ընդ մեզ համաձայն գոլով, նոցա կամակցութեամբ նզովեցաք և ընկեցաք զԿիրոն ըստ հրամանի հաւցնմեմք և Աղուանք...» (գլ. Խէ)⁴։

Վերջին պարբերությունը քաղված է Աբրահամ կաթողիկոսի շրջաբերական թղթից։ Բայց այստեղ «Յառաջագոյն քան զՀայոց աքոռակալութիւնն կացեալ աքոռակալութեանն Աղուանից» միջանկյալ նախադասությունը այն տեսքով, ինչպես պահպանվել է «Աղվանից աշխարհի պատմության» ձեռագրերում, ոչ մի կերպ չի կապվում ընդհանուր բովանդակության հետ։ Մեջ ունի ված քաղվածքի մեջ, ինչպես Կաղանկատվացին է նշում, խոսքը գնում է Կյուրոնի «դիմադարձութեան» մասին, նրա անհնազանդությունը դատապարտելու, նրան «սրով Հոգւոյն» կտրելու մասին, ըստ որում այդ ամենը կատարվել է Աղվանից թեմի «համաձայնութեամբ և կամակցութեամբ»։ Այս կոնտեքստում բոլորովին անհրաժեշտություն չկար խոսելու, թե ում աքոռակալությունն է ավելի առաջ եղել՝ Հայոց, թե՞ Աղվանից։ Մենք գիտենք, որ Հայոց կաթողիկոսի գերագահության խնդիրը երբեք վիճաբանությունների հարց չի եղել։ Ուշադրության արժանի է այն, որ այստեղ հեղինակը հատկապես ընդգծում է. «Իսկ Աղուանք ոչ քակտեցան ի միաբանութենէ Հայոց»։ Բայց եթե նույնիսկ ենթադրենք, որ հեղինակը կամեցել է առաջ քաշել այդ հարցը, այդ դեպքում ինչու պետք է նա վկայակոչեր մի աղբյուր (տվյալ դեպքում Աբրահամ կաթողիկոսի շրջաբերական թուղթը, որ բարեբախտաբար պահպանվել է «Գիրք թղթոցում»), որտեղ, ինչպես շատ լավ գիտեր հեղինակը, այդպիսի բան չկար և չէր չի կարող լինել։ Այդ բանն անելու համար մի՞թե նա չէր կարող գտնել ավելի հարմար առիթ, ավելի հարմար տեղ։ Ուրեմն ինչպե՞ս բացատրել Աբրահամ կաթողիկոսի շրջաբերական թղթի և նրանից «Աղվանից աշխարհի պատմության» մեջ պահպանված հատվածի միջև եղած տարբերությունը։ Արդյո՞ք

տուացույ Պատմութիւն Աղուանից աշխարհի», ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1860)։ Կ. Շահնազարյանը եւ 1860 թ. Փարիզում հրատարակեց Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի Պատմութիւնը», որի առաջարանում նա գրում է հետևյալը. «Յետ մանրակրկիտ համեմատութեամբ (չորից) օրինակաց մերոց, եւ կարգելո հառաջարան և ծանոթութիւնս կարեոր ի բացատրութիւն և յուղղութիւն վրիպակաց ընծայեմ ահա ի լոյս...» (էջ 86)։

³ Մի քանի ճշգրտումներ առաջարկել ենք մենք (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 1, էջ 174—191)։

⁴ «Մովսեսի Կաղանկատուացույ Պատմութիւն Աղուանից աշխարհի», էջ 214—215։

աշխատեղ պետք է տեսնել դիտավորյալ միջամտություն՝ «կեղծիք», ինչպես կարծել է Ն. Ակինյանը: Մեր կարծիքով դա ճիշտ չէ:

Փորձենք բացատրել, թե ինչպես կարող էր առաջանալ այս աղավաղումը: Կաղանկատվացու մոտ պահպանված տվյալ հատվածի ուշագրի ընթերցումը և մանրակրկիտ համեմատությունը «Գիրք թղթոցում» պահպանված Աբրահամ կաթողիկոսի շրջաբերական թղթի համապատասխան հատվածի հետ մեզ բերեց այն համոզման, որ աշխատեղ առկա է գրչական սխալ և ոչ թե «կեղծիք»: Այսպես.

«Գիրք Թղթոց»

էջ 193—194

«... զՎրաց ասեմ և զԱղուանից որք զժահահոտ սերման նախասեցելոցըն մեծարանաւք ընկալեալ յինքեանս հաստատեցին, զաստուածպաշտութեան լոկ զկերպարանս ցուցանելով պարզամտաց, և որք սովորութիւն ունին զմիաբանելն ընդ նոսա. և ի զարութենէն ինքեանց նման՝ և զնոսա հեռացուցանեն. վասն այս Խառնաւոր Խամարեցան գրեմ⁵ յառաջագոյն քան զմեզ կացեալքն յաստիճանի կաթողիկոսութեան՝ յԱղուանս. իսկ մեր ի Վիրս առ Կիրովն՝ որ կաթողիկոսն անուանի, և նորին աթոռակիցսն»:

ԿԱՂԱՆԿԱՏՎԱՅԻ

Գիրք Բ, գլուխ ԽԷ, էջ 214—215

«... շրջաբերական թղթով վասն Կիրիոնի դիմադարձութեանն Աբրահամ և յաղագս ամենեւին ի բաց կարելոյն զնա սրով Հոգւոյն ազդել նախ յԱղուանս, տայ գիտութիւն և գրէ այսպէս ի թըղթին, եթէ յառաջագոյն քան զձաւոց արոռակալութիւնն կացեալ արոռակալութեանն Աղուանից, և ընդ մեզ համաձայն գոլով, նոցա կամակցութեամբ նղովեցաք և ընկեցաք զԿիրիոն ըստ հրամանի հարցն՝ մեր և Աղուանք...» և այլն:

⁵ Սույն սրբագրությունը «Գիրք թղթոցում» առաջարկում ենք մենք՝ հենվելով Ուխտանեսի «Հայոց պատմության» վրա: Հիշենք, որ «Գիրք թղթոցի» տպագրության մեջ այս հատվածը անաղարտ չէ՝ «վասն այս Խառնաւոր Խամարեցայ գրեմ» (էջ 193): Հովսեփ Իզմիրեանց գրական հանձնաժողովը, որ իրականացրել է «Գիրք թղթոցի» տպագրությունը, ձեռքի տակ ունեցել է Կ. Պոլսի Անտոնյան մատենադարանի գրչագրից կատարված մի ընդօրինակություն: Նրանք նշում են, որ «Կետադրությունները՝ գրչագրին մեջ բոլորովին անկանոն էին» և նրանք ստիպված են եղել ուղղել կետադրությունը, տառերի և գրության տարբերությունը, երբեմն լրացնելով պակաս տառերը և բառերը: «Ասոնցմէ դուրս որչափ հնար էր, ամենայն ինչ բառ առ բառ և տառ առ տառ տպագրված է...» (էջ է): Թե ինչպես է եղել մեզ հետաքրքրող մասը գաղափար գրչագրում չենք կարող ասել, սակայն մի բան պարզ է. «համարեցայ» բառի վերջին տառը յ, որ դիմային ցուցիչ է հանդիսանում, հավանաբար ավելացված է հրատարակիչների կողմից: Անշուշտ նրանք են վերջակետ դրել նաև «զրեյ» բառից հետո և, ամբողջական նախադասությունը բաժանելով երկու մասի, միացնել են նրա իմաստը: Բանն այն է, որ Աբրահամ կաթողիկոսի շրջաբերական թուղթը, ավելի ամբողջական կամ թերի, պահպանվել է ինչպես Ուխտանեսի մոտ, այնպես էլ Մաշտոցի անվ. Մատենադարանի № 2966 (էջ 102ա) և № 3062 (էջ 185ա) գրչագրերում: Ծիշտ է, վերջին գրչագրում մեզ հետաքրքրող բառը գրված է «համարեցայ» ձևով, բայց պետք է նկատի ունենալ, որ այս ուշ շրջանի գրչագիր է (1765—1766 թթ.) և նրա նշանակությունը տվյալ դեպքում վճռական չէ: Մյուս գրչագրի մեջ (№ 2966) պահպանվել է «համարեցա», առանց յ դիմային ցուցիչի: Բարեբախտաբար Ուխտանեսի մոտ, որ «Գիրք թղթոցի» ավելի հին և ստույգ օրինակը պետք է ունեցած լինի, պահպանվել է ճիշտ՝ «համարեցան» ձևով—հոգնակի, երրորդ դեմք, որը թե՛ թվով, թե՛ դեմքով միանգամայն համապատասխանում է նեթակայի հետ: Այսպես. «վասն այս Խառնաւոր Խամարեցան գրել յառաջագոյն քան զմեզ կացեալքն յաստիճան(ի) կաթողիկոսութեան...» (Ուխտանէս Եպիսկոպոս, Պատմութիւն հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 135—136):

Դժվար չէ նկատել, որ Կաղանկատվացին այս հատվածը փոխ է առել Աբրահամ կաթողիկոսի շրջաբերական թղթից՝ որոշ փոփոխություններով: Այստեղ աղավաղված է և թյուրիմացությունների տեղիք է տվել մեջ բերվող հատվածի սկիզբը՝ «յառաջագոյն քան զայնոց արողակալութիւնն կացեալ արողակալութեանն Աղուանից»: Նախ և առաջ նկատենք, որ Մ. Կաղանկատվացին մեջբերումը կատարել է նախադասության կեսից, բաց թողնելով նրա սկիզբը՝ «վասն այսր հակառու համարեցան գրել», որ շատ անհրաժեշտ է նախադասության իմաստը ճիշտ ընկալելու համար, քանի որ շարունակության մեջ պակասում է ստորոգյալը: Բացի այդ, ականերն է, որ «Աղվանից աշխարհի պատմության» հեղինակը շրջաբերական թղթի տվյալ հատվածը շարադրել է իր խոսքերով: Այսպես, շրջաբերականի «յաստիճանի կաթողիկոսութեանն» բառերի փոխարեն գործ է ածել «արողակալութիւն» բառը, «զմեզ» դերանունը փոխարինել է «զայնոց» որոշակի հատկացուցիչով, իսկ շարունակության մեջ համառոտ տրված է նամակի նշանակությունը. «նղովեցաք և ընկեցաք զԿիրիոն»: Բայց այս միջամտություններից նախադասության իմաստը ամենևին չէր փոխվի, և թե չլիներ մի ուրիշ տարբերություն ևս. շրջաբերական թղթի «կացեալն» բառը, որ տվյալ դեպքում ենթակայի դեր է խաղում, որով ականարկված են Աբրահամից առաջ եղած այն կաթողիկոսները, որոնք անցյալում նեոստորականության և քաղկեդոնականության դեմ պայքարելու նպատակով նամակներ են հղել Աղվանք⁶, Կաղանկատվացու մոտ արտագրված է թերի, բայց են թողնված վերջին երկու տառերը՝ «Բն» և այն դարձել է ստորոգյալ՝ «կացեալ»: Ահա այս փոքրիկ անզգուշությունը, որի «մեղքն» ընկնում է մեր հոգնատանջ գրիչների վրա, բոլորովին փոխել է նախադասության իմաստը: Ակներն է, որ «Աղվանից աշխարհի պատմության» այս հատվածը կարոտ է սրբագրության, որից հետո այն միանգամայն կհամապատասխանի Աբրահամ կաթողիկոսի շրջաբերականի ոգուն:

«[վասն այսր հարկաւոր համարեցան գրել] յառաջագոյն քան [զմեզ յաստիճանի] Հայոց աթոռակալութեան կացեալ[քն] յաթոռակալութիւն Աղուանից» և շարունակությունն, ինչպես Կաղանկատվացու բնագրում, որ պետք է թարգմանել այսպես. «Այս մասին մեզանից առաջ Հայոց կաթողիկոսական զահի վրա գտնվողները անհրաժեշտ են համարել գրել Աղվանքի կաթողիկոսությանը...»:

Այն հանգամանքը, որ աղավաղված տեքստով էլ քննության առարկա այս նախադասությունը առաջին հայացքից թվացել է կանոնավոր և որոշակի իմաստ է արտահայտել, շատ է դժվարացրել նրա ճիշտ ընկալումը: Երևի այդ է եղել պատճառը, որ բանասերները մինչև այժմ հատուկ քննության չեն ենթարկել այն, իսկ թարգմանիչները ինչպես կա, այնպես էլ թարգմանել են⁷:

⁶ Այստեղ Աբրահամը նկատի ունի Հովհաննես կաթողիկոսի թուղթը Աղվանից Աբաս կաթողիկոսին, Աղվանք թափանցած հերձվածողներին՝ Նղիային, Բնոտին և Իրասին, որոնք «զար որոմն անիծելոյն նեոստորի և զժողովոյն Քաղկեդոնի անարգելարար սերմանեն յոգիս անմեղաց, թիրելով զնոսա յուղղափառ հաւատոյ», պատժելու և Աղվանքից հալածելու մասին («Գիրք թղթոց», էջ 81): Այս թուղթը որոշ կրճատումներով և տարբերություններով բերում է և Մովսես Կաղանկատվացին (գիրք Բ, գլ. է, էջ 94—97):

⁷ Այսպես, Ք. Պատկանյանի ուսերեն թարգմանության մեջ կարդում ենք. «Престол агванский бывший раньше нашего был прежде согласен с нами. (История Агван Монастыря Катанкатваци, СПб, 1861, էջ 216). 2. Դառնալով թարգմանել է... Abraham... wrote

Եթե մենք նկատի ունենանք, որ այս պարբերությունը միակն է ամբողջ «Աղվանից աշխարհի պատմության» մեջ, որը հակասության մեջ է Մովսես Կաղանկատվացու ջերմ հայրենասիրության և Գրիգոր Լուսավորչի հաջորդների նկատմամբ ունեցած խոր հարգանքի և ակնածանքի հետ, ապա մեր սրբապրությունը ձեռք է բերում առավել հավանականություն:

Բ) «Իսկ ի յունական զօրավարացն գրգռեալ հայք խնդրել զգահերիցոսքիս ի վերայ Աղուանից, որում ոչ հաւանեալ Աղուանք զայլ ոմն երևցուցին կանխաւ առաքեալ եկեալ յաշխարհն Աղուանից Եղիշէ անուն, յաշակերտաց Տեառն, ձեռնադրեալ ի ձեռանէ Յակոբու եղբօր Տեառն...» (էջ 218):

Այս երկրորդ հատվածի մասին խոսելիս Ն. Ակինյանը Կաղանկատվացուն մեղադրում է կեղծիքի մեջ⁸: Բայց այստեղ կեղծիք չկա: Այստեղ ևս առկա է

a letter to the following effect: "The see of Albania was established before that of Armenia..." ("The History of the Caucasian Albanians by Movses Dasxurançi., transl. by C. J. F. Dowsett, London, 1961, էջ 174). Նույնպես է թարգմանել այս նախադասությունը նաև Վ. Առաքելյանը. «...Հայերի աթոռակալությունից առաջ հաստատվել է Աղվանքի աթոռակալությունը» և այլն (Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վարագ Առաքելյանի, Երևան, 1969, էջ 210): Անհրաժեշտ ենք համարում նաև նշել, որ այս առթիվ Վ. Առաքելյանը 222 ծանոթադրության մեջ գրում է. «Հայոց կաթողիկոսը այդպիսի նամակ չէր կարող գրել, դա ոչ այնքան հեղինակի հորինածն է, որքան՝ գրիչների» (էջ 287): Պետք է ասել, սակայն, որ Աբրահամ կաթողիկոսի շրջաբերական թղթի պատմականության վերաբերյալ կասկած չինել չի կարող: Այն առավել կամ պակաս ամբողջական պահպանվել է և «Գիրք թղթոցում» (էջ 189—195), և վերը հիշված երկու ձեռագրերում, այնպես որ այդ նամակը համարել գրիչների կողմից հորինված, ճիշտ չի լինի: Այլ հարց է, որ մեջբերումը աղավաղված է, մի բան, որ մենք փորձեցինք ցույց տալ:

8 Ներսես Ակինյանը իր «Մովսես Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի) և իր Պատմութիւն Աղուանից» (Վիեննա, 1970) ուսումնասիրության մեջ եկեղեցական ինը դասերի շուրջը հույների հարուցած վիճաբանությունների մասին խոսելիս մանրամասն քննության է առնում Մաքենացոց վանքի վանահայր Սողոմոն վարդապետի նամակի առանձին հատվածները և, կասկածներ հայտնելով որոշ փաստերի նկատմամբ, շորորոգ կետի տակ քննում է նաև հետևյալ նախադասությունը. «Յայնժամ շարժեցան ամենայն մեծամիտք, եւ ուր առաքեալ էր վախճանեալ զամենեցուն աթոռսն պատրիարք խոստովանեցան»: Այս կապակցությամբ մեջ բերելով 11 դարում Բյուզանդիայում հորինված մի պատմություն, որն իշխվկայում է, թե Բյուզանդիայի առաջին եպիսկոպոսը՝ Ստաբոսը, ձեռնադրվել է Անդրեաս առաքյալի ձեռքով, Ն. Ակինյանը շարունակում է. «Երբ Բյուզանդացիք այս վավերագրին վրա հասած իրավունք սեփականեցին իրենց եկեղեցին առաքելական և պատրիարքական աթոռ հռչակել, «յայնժամ շարժեցան ամենայն մեծամիտք (այսինքն Հայք և Աղվանք...), եւ ուր առաքեալ էր վախճանեալ զամենեցուն աթոռսն պատրիարք խոստովանեցան», այսինքն նմանօրինակ կեղծիքներով ցույց տվին, թե նաև իրենց եկեղեցիները առաքելական ծագումն են, ուստի իրենք ալ իրավունք ունին պատրիարքական աթոռ ունենալ: Մեծամիտքներն են նաև Աղվանք. հատկապես աղվան պատմագիրը, որ ոչ միայն ապացուցանել կջանա, թե Աղվանից եկեղեցին առաքելական է, այլ և Աղվանք ավելի հառաջ ընդունած են քրիստոնեությունը քան հայերը. ուստի Աղվանից աթոռին է նախագահությունը քան Հայոց» (նշվ. աշխ., էջ 322): Ն. Ակինյանը, իհարկե, ճիշտ չի վարվել, իր կողմից ավելացնելով «Հայք և Աղվանք» բառերը՝ իբր պարզելու համար հեղինակի միտքը: Այս հավելումը ցույց է տալիս, որ նա ճիշտ չի մեկնաբանել Աղվանից աշխարհի պատմության այս հատվածը, որի հեղինակը հիմք չունի հայերին կամ աղվաններին «մեծամիտ» համարելու: Առավել ևս «մեծամիտ» չէր ինքը՝ Մովսես Կաղանկատվացին: Աղվանից եկեղեցին երբևէ պատրիարքական աթոռ հաստատելու հավանություն չի ունեցել: Ճիշտ չէ նաև Ն. Ակինյանի այն եզրակացությունը, թե իբր Աղվանից եկեղեցին նախագահություն է պահանջել Հայոց եկեղեցու նկատմամբ: Ոչ մի աղբյուրից մեղ հայտնի չէ որևէ փաստ, որևէ ակնարկ, որ Աղվանից եկեղեցին երբևէ այդպիսի պահանջ ներկայացրած լինի: Մինչդեռ Ն. Ա-

հրշական սխալ, և Կաղանկատվացին կամ նրա «խմբագիրը» հանիրավի հն կեղծիքի մեջ մեղադրվում։

Փորձենք վերականգնել այս հատվածը Ուխտանեսի օգնությամբ, որն իր գրքում պատմում է միևնույն դեպքերի մասին։

Ուխտանես եպիսկոպոսի «Պատմութիւն Հայոց» գրքի երկրորդ հատվածի ԿԳ գլուխը, որը վերնագրված է «Յաղագս երկրորդ պատճառի բաժանման վրաց», ինչպես նաև հաջորդ երկու՝ ԿԴ և ԿԵ գլուխները, իր իսկ վկայությամբ⁹, Ուխտանեսը քաղել է «Աղուանից աշխարհի պատմութիւնից»։

Եվ իրոք, այդ գլուխների համեմատությունը Կաղանկատվացու համապատասխան հատվածների հետ հաստատում է նրանց բնագրական սերտ աղերսը, որ կարելի է բացատրել միայն փոխառությամբ։ Համապատասխան հատվածների մանրակրկիտ համեմատությունը այն համոզման է բերում, որ Ուխտանեսը գրեթե բառացի քաղել է Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմութիւն» գրքից և որ հակառակը լինել չի կարող։

Քննենք այս հատվածը քիչ ավելի ընդարձակ, պարբերության սկզբից, ի միջի այլոց մի փոքրիկ, բայց կարևոր ճշգրտում կատարելու համար նաև Ուխտանեսի «Պատմութիւն» մեջ։

ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՎԱՅԻ

Գիրք Բ, գլ. ԽԸ, էջ 217—218

ՈՒՒՏԱՆԵՍ

Հատված Բ, գլ. ԿԳ, էջ 120

«... կարգեն ղԱբրահամ պատրիարդ, և զԱղուանիցն արքեպիսկոպոս, և զՎրացն մետրապոլիտ։ Խեռեցաւ Վրացն, որում Կիրիոն կոչէին՝

«... կարգեցին ղԱբրահամ պատրիարք և ղԱղուանից Արքեպիսկոպոս և զՎրացն Մետրապոլիտ. որում ոչ հաւանեալ Վրացն Կիրոն կալ ի կարգին յայնմիկ՝ յորում կացուցին խեռեցաւ

կինյանը գրում է, որ հրապարակ հանելով Եղիշե առաքյալին «... (Աղվանք) իրենց «հառաջահավատ քան զՀայս և զՎիրս» ըլլալը կհաստատեն Աբրահամ կաթողիկոսի վկայությամբ. վկայություն մը, որ կեղծված է իրենց պատմագրին ձեռքով» (նշվ. աշխ., էջ 323)։ Իհարկե, ճիշտ է այն, որ «Աղվանից աշխարհի պատմութիւն» մեջ իրոք պատմվում է Եղիշեի Աղվանք կատարած առաքելության և նահատակության մասին։ Հայտնի է նաև, որ Եղիշեի ավանդությունը Կաղանկատվացու միջոցով փոխ է առել Ուխտանեսը, սակայն, կրկնում ենք, ոչ Կաղանկատվացին, ոչ Ուխտանեսը, և ոչ էլ Աղվանից կաթողիկոսներից որևէ մեկը այդ պատճառարանությամբ հայերի նկատմամբ «կաթողիկոսական նախագահություն» երբևէ չի պահանջել։ Հայոց կաթողիկոսները մինչև V II դարի սկիզբը, առանց պատրիարքական կոչում ունենալու, իրականացնելիս ևն եղել պատրիարքական պարտականություններ, խաղաղությամբ տնօրինել են Հայոց եկեղեցու բոլոր մեծ ու փոքր թեմերի, այդ թվում նաև՝ Վրաց և Աղվանից թեմերի հոգևոր գործերը։ Նրանք էին ձեռնադրում Վրաց և Աղվանից կաթողիկոսներին, և նրանց միջև երբևէ, մինչև V II դարի սկիզբը՝ քաղկեդոնականության թափանցումը Անդրկովկաս, որևէ զրոծություն կամ վեճ չի եղել։

Հայոց եկեղեցում պատրիարք ունենալ-չունենալու խնդիրը, ինչպես վկայում է Կաղանկատվացին, հույները փաթաթեցին հայերի վրին։ Մովսես Կաղանկատվացին հասկանում էր, որ այս սլաշմաններում պատրիարք ունենալու վերաբերյալ հայ հոգևոր հովիվների ցանկությունը ոչ թե նրանց անձնական փառասիրությունից էր բխում, այլ հանդիսանում էր ինքնապաշտպանության միջոց, միակ ելքը՝ վերջ տալու վտանգավոր վեճերին և ամրապնդելու իրենց եկեղեցու անկախությունը (հմտ. նաև «Թուղթ երանելուն Մաշտոցի նախ քան զկաթողիկոսութիւն առ տէր Գէորգ հայոց կաթողիկոս», Մաշտոցի անվ. Մատենադարանի № 2966 գրչագիրը, էջ 111ա)։

⁹ «Հայս ասելով մեզ յայլոց պատմագրաց թելադրութենէ...», «Վասն զի ուսեալ մեր և այլ պատճառ ի պատմութենէ գրոց յաղագս բաժանմանն վրաց», «Լսելով զայս մեզ ի պատմագրաց Աղուանից» (Ուխտանէս եպիսկոպոս, էջ 119 և 122)։

և հակառակության բերելը վճիռ. Իսկ սուրբ հայրապետն Աբրահամ ասէր. «Լինել յառաջահաւատ քան զՎիրս՝ զԱղուանս և նոցա անկ է եպիսկոպոսապետութիւն»:

և զհակառակության բերելը վճիռ: Իսկ հայրապետն Աբրահամ լինել ասէր յառաջահաւատ քան զՎիրս և նոցա անդ է Արք եպիսկոպոսութիւն»:

Ուխտանեսի մօտ վերջին նախադասութիւնը բոլորովին անհասկանալի է մնում: Ո՞ւմ մասին են և ի՞նչ են նշանակում Աբրահամ կաթողիկոսի խոսքերը՝ «յառաջահաւատ քան զՎիրս և նոցա անդ է Արք եպիսկոպոսութիւն»: Մինչդեռ Կաղանկատվացու մօտ այս մասը մնացել է անաղարտ և միանգամայն հասկանալի է. «Հայրապետն Աբրահամ ասէր. «Լինել յառաջահաւատ քան զՎիրս «Աղուանս, և նոցա անկ է եպիսկոպոսապետութիւն»: Ինչպես տեսնում ենք, այստեղ խոսքն այն մասին է, որ Աղվանքը Վրաստանից առաջ է ընդունել քրիստոնեությունը, ուստի «նոցա անկ է», այսինքն նրանց է պատշաճում եպիսկոպոսապետութիւն ունենալ: «ՂԱղուանս» բառի անհրաժեշտութիւնը բխում է ամբողջ նախադասութեան տրամաբանութիւնից: Առանց «ՂԱղուանս» բառի Ուխտանեսի մօտ նախադասութիւնը թերի է և անհասկանալի, մինչդեռ լրացնելով պատահաբար դուրս մնացած բառը՝ նախադասութիւնն իմաստավորվում է: Մենք այն կարծիքին ենք, որ Ուխտանեսի բնագիրը ևս այս մասում անպայման ունեցել է «ՂԱղուանս» բառը, որն ընկել է հետագա ընդօրինակութիւնների ժամանակ: Ուստի գտնում ենք, որ Ուխտանեսի այս հատվածը պետք է խմբագրել ըստ Կաղանկատվացու հետևյալ կերպ. «...ասէր, լինել յառաջահաւատ քան զՎիրս՝ ՂԱղուանս և նոցա անկ է Արքեպիսկոպոսութիւն...»:

Այժմ քննենք այս նույն հատվածի շարունակութիւնը.

ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՎԱՅԻ

Յայսմ մաքառմանէ և ի խնդիր ուղղափառ հավատոյ դարձան Վիրք և եղեն քաղկեդոնիտք:

Իսկ ի յունական զորավարացն գրեգորեալ Հայ¹⁰ խնդրել զգահերիցութիւն ի վերայ Աղուանից, որում ոչ հաւանեալ Աղուանք՝ զայլ ոմն երևեցուցին կանխաւ առաքեալ եկեալ յաշխարհն Աղուանից Եղիշէ անուն...

ՌԻՏԱՆԵՍ

Յայսմ մաքառման և ի խնդիր ուղղափառ հաւատոյ դարձան Վիրք և եղեն քաղկեդոնիկ

ի սաղրելոյ սատանայի և Կիրոնի, միանգամայն և ի կամաց կայսերն Մուրկայ,

և (ի) յունական շօրավարացն գրգռեալ լինէր լիրքն այն Կիրոն՝ խնդրել գահերէցութիւնն իւր ի վերայ Աղուանից: Որում ոչ հաւանեալ Աղուանից, զայլ ոմն երևեցուցանեն կանխաւ եկեալ առաքեալ յաշխարհն Աղուանից՝ Եղիշայ անուն.

¹⁰ Այսպես է «Աղվանից աշխարհի պատմության» Մ. էմինի մոսկովյան 1861 թ. հրատարակության մեջ և Վարագ Առաքելյանի աշխարհարար թարգմանության մեջ: Բայց անհրաժեշտ ենք համարում նշել, որ մի շարք ձեռագրեր «Հայք» բառի փոխարեն ունեն հետևյալ տարբերակները. EC — գրգռեալ զնա նախ, BL — գրգռեալ զնա, ADG — գրգռեալ նախ, լատինական տառերն այստեղ նշանակում են՝ A — № 1531 ձեռագիրը (1289 թ.), B — № 1725 (1664 թ.), C — № 2561 (1664 թ.), D — № 3043 (1839 թ.), E — № 8035 (1848 թ.):

ինչպես տեսնում ենք, Կաղանկատվացու մոտ հունական զորավարները գրգռում են «հայր խնդրել զգահերիցուքին ի վերայ Աղուանից»։ Բայց հայտնի է, որ հայոց կաթողիկոսը միշտ էլ գահերեց է եղել, և թե՛ վրաց եկեղեցին մինչև պառակտումը, թե՛ աղվանից եկեղեցին ճանաչել են նրա գահերեցությունը և ենթարկվել են նրան։

Եկեղեցական ինը դասերի շուրջը հույների ակամա՞ վիճաբանություններին վերջ տալու համար հայոց եկեղեցին որոշեց իր ներսում ևս ունենալ պատրիարքի և մետրապոլիտի աստիճաններ, որպեսզի լրանային հույների պահանջած ինը դասերը։ Եվ քանի որ աղվանից թեմի առաջնորդին բաժին էր ընկել արքեպիսկոպոսի աստիճանը, իսկ վրաց թեմի առաջնորդ Կյուրոսին՝ մետրապոլիտի, ապա վերջինս խիստ վերավորվել էր և ոչ մի կերպ չէր համաձայնում ընդունել աղվանից եկեղեցու հովվի գահերեցությունը վրաց եկեղեցու հովվի նկատմամբ։

Այսպիսով, գահերեցության վեճը իրականում գնում էր ոչ թե հայոց և աղվանից, այլ վրաց և աղվանից կաթողիկոսների միջև։ Այդ նրանք էին, որ չէին կամենում զիջել միմյանց նկատմամբ գահերեց լինելու պատիվը։ Ուրեմն, ինչպես ցույց տվինք, սխալ է Կաղանկատվացու մոտ պահպանված «գրգռեալ Հայր» ընթերցվածը։ Կաղանկատվացուց տարբեր է և ճիշտ է Ուխտանեսի մոտ. «Ի յունական զորավարացն գրգռեալ լինէր իրքն Կիրոն խնդրել գահերեցութիւն իւր ի վերայ Աղուանից»։

Մենք համոզված ենք, որ սկզբնապես ճիշտ է եղել նաև Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության» մեջ։ Այդ մասին են վկայում ձեռագրական տարրնթերցվածները, որոնք բերված են համապատասխան հատվածի տողատակում։ Այսպես, օրինակ. EC — ձեռագրերը ունեն «գրգռեալ զնախա», որտեղ «նախ» բառը անիմաստ է և պետք է ենթադրել, որ ավելացված է ընդօրինակությունների ժամանակ, ուստի այն անհրաժեշտ է սրբագրել, իսկ BL — ձեռագրերն ունեն «գրգռեալ զնա». որ անշուշտ ավելի ճիշտ է, իսկ մյուս ձեռագրերում՝ ADG և Շահնազարյանի օգտագործած շորս ձեռագրերում «զնա»-ի փոխարեն առկա է «նախ» սխալ և անիմաստ բառը, որը հավանաբար պետք է բացատրել հաջորդ՝ «խնդրել» բառի առաջին տառի կրկնությամբ զրված «զնա» դերանվան հետ միասին, համենայն դեպս նրանք ևս չունեն «Հայր»։ Այսպիսով, Մատենադարանում պահվող Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության» ձեռագրերից վեցում, այդ թվում և հնագույն՝ 1289 թ. ձեռագրում չկա «Հայր» բառը, մի հանգամանք, որը չի կարելի անտեսել։

Տվյալ դեպքում Կաղանկատվացու գործածած «զնա» անձնական դերանվան տակ իր ժամանակ անտարակույս հասկացել են միայն Կյուրոսին։ Այդպես է հասկացել նաև Ուխտանեսը, որը, ինչպես տեսանք, իր այս տեղեկությունը քաղել է Կաղանկատվացուց։ Եվ քանի որ Ուխտանեսը հատկապես գրում էր վրաց եկեղեցու անջատման պատմությունը, ապա նա անհրաժեշտ է համարել հականեհանվան ճիշատակել վրաց կաթողիկոսին և Կաղանկատվացու «զնա» դերանվան փոխարեն գրել է վրաց կաթողիկոսի անունը՝ «Կիրոն» և, Կաղանկատվացու խոսքերին իր կողմից ավելացնելով մի քանի խիստ

Ը — № 2646 (1761 թ.), Լ — Լենինգրադում գտնվող ձեռագիրը և Շ — Կարապետ Շահնազարյանի Լրկհասոր տպագրությունը, Փարիզ, 1860։

խոսքեր ևս Կյուրոսի հասցեին՝ բացահայտել է նաև իր անձնական վերաբերմունքը Կյուրոսի նկատմամբ, մանավանդ որ Ուխտանեսի հիմնական նպատակը հենց այդ դեպքերի լուսաբանությունն է եղել:

Այս ամենից հետո մենք գտնում ենք, որ նախապատվությունը պետք է տալ Կաղանկատվացու ձեռագրի ճիշտ «գնա» ընթերցվածին, և այն մոծել բնագիր, որով Կաղանկատվացու մոտ ևս կունենանք ճիշտը՝ «իսկ ի յունական գորավարացն գրգռեալ զնա խնդրել զգահերիցութիւն ի վերայ Աղուանից»¹¹:

Կարծում ենք, որ մեր սրբագրությամբ առաջարկվող բնագիրն այլևս ոչ մի հիմք չի տալիս «Աղվանից աշխարհի պատմության» հեղինակի հասցեին անիրավացի մեղադրանքներ ուղղել և թյուր եզրակացությունների հանգել, քանի որ միանգամայն պարզաբանվում է խնդրո առարկա հարցի բուն էությունը:

ДВЕ ПОПРАВКИ В ТЕКСТЕ «ИСТОРИИ АЛУАНКА» МОВСЕСА КАЛАНКАТУАЦИ

Ш. В. СМБАТЯН

(Резюме)

В процессе неоднократных копирований трудов древнеармянских историков в текст невольно вкрадывались ошибки, которые порою в корне искажали смысл предложений.

В одном из номеров «Историко-филологического журнала» (1972, № 1) мы предложили несколько поправок замеченных нами искажений. Настоящая статья посвящена двум другим искажениям в тексте «Истории Алуанка» (книга II, гл. 47 и 48), исправление которых в настоящее время, когда готовится к изданию научно-критический текст «Истории Алуанка», мы считаем необходимым, поскольку они послужили поводом для неправильных рассуждений и выводов.

Так, выдающийся армянский филолог Нерсес Акинян из конгрегации мхитаристов в Вене, посвятивший специальную монографию «Истории Алуанка» Мовсеса Каланкатуаци, заметив различие между «окружным посланием армянского католика Абраама и выдержкой из этого послания, сохранившейся в «Истории Алуанка», обвиняет автора в умышленной переделке послания, «редактировании», как он выражается, данного первоисточника.

¹¹ Նշենք, որ այս մասը ճիշտ են թարգմանել թե՛ Ք. Պատկանյանը, և թե՛ Չ. Դառսեթր: Այսպես, Ք. Պատկանյանի ուսերեն թարգմանության մեջ կարդում ենք. «Прежде всего греческие полководцы возбуждали его просить первенство над Агванцами» (էջ 220), որտեղ его — «նրան» դերանվան տակ հասկացվում է միայն Կյուրոսը: Ճիշտ այդպես է թարգմանել նաև Չ. Դառսեթր. «As a result of this dispute the Georgians turned from the orthodox faith and became Chalcedonians. The Greek generals at first encouraged them to seek precedence over the Albanians...» (էջ 176—177);—... հույն զորավարները նրանց նախապես գրգռում էին առավելության հասնել աղվանների նկատմամբ...», որտեղ them («նրանց») դերանվան տակ ենթադրվում են նախադասության սկզբում հիշատակված վրացիները: Իհարկե ավելի ճիշտ կլիներ թարգմանել եզակիով՝ «նրան»: Սակայն սխալ է Վ. Առաքելյանի թարգմանության մեջ. «Ապա հունական զորավարները գրգռեցին հայերին պահանջել գահերեց լինելու Աղվանքի վրա...» (էջ 213):

Сличив текст «Истории Алуанка» с другими историческими памятниками средневековой Армении—«История» Ухтанэса и «Книга Посланий» («Գրքը թղթոց») — и сравнив разночтения рукописей текста «Истории Алуанка», нам удалось восстановить первоначальный текст. Предлагаемое нами новое, правильное чтение этих искаженных предложений не дает больше повода для несправедливых обвинений автора «Истории Алуанка» в умышленном искажении первоисточника.